


բաժանարարների հետ բազմապատկվելով՝ կձևվի նույն քանակով զույգ բաժանարարներ: Ուրեմն՝ զույգ թվի զույգ բաժանարարները կենտերից միշտ շատ են կամ հավասար: Օրինակ՝ 6-ի բաժանարարները 4 հատ են՝ 1, 2, 3, 6: Ստացվեց, որ հավասար են քանակներով, իսկ 12 թվի բաժանարարները 6 հատ են՝ 1, 2, 3, 4, 6, 12: Այս թվի դեպքում շատ են:

Պատասխան՝ ո՛չ չի կարող եթե թիվը զույգ է:

4. Կտրող սարքը կարող է ցանկացած ստվարաթղթե ուղղանկյունուց կտրել քառակուսի, որի կողմը հավասար է ուղղանկյան փոքր կողմին: Տղան, օգտվելով այդ կտրող սարքից, իր ունեցած ուղղանկյունը կտրեց 2 մեծ քառակուսիների, 3 ավելի փոքր քառակուսիների և 10սմ կողմերով 5 փոքր քառակուսիների: Գտի՛ր տղայի ուղղանկյան չափերը: Կատարի՛ր համապատասխան գծագիր: (4 միավոր)



Լուծում: Այս խնդիրը հարմար է լուծել «վերջից»: 10 սմ կողմով հինգ քառակուսի կարելի է ստանալ միայն 50սմ երկարություն և 10 սմ լայնություն ունեցող ուղղանկյան չորս հաջորդական կտրվածքներով: Քանի որ այս ուղղանկյունն իր հերթին ստացվել է՝ երեք միանման քառակուսիները հաջորդաբար կտրելով, ապա այս քառակուսիներից յուրաքանչյուրի կողմի երկարությունը 50 սմ է, և դրանք կտրվել են ուղղանկյունուց, որի ամենամեծ կողմը $10 + 50 \cdot 3 = 160$ սմ է: Քանի որ վերջին ուղղանկյան չափերն են 160×50 (սմ), ապա նույն տրամաբանությամբ գտնում ենք, որ երկու մեծ քառակուսիներից յուրաքանչյուրի կողմի երկարությունը 160 սմ է, որը սկզբնական ուղղանկյան փոքր կողմի երկարությունն է: Վերջինիս երկար կողմը կլինի $50 + 160 \cdot 2 = 370$ սմ: Այսպիսով՝ սկզբնական ուղղանկյունն ունեցել է 370 սմ \times 160 սմ չափեր (տես նկար 2–ը):

Պատասխան՝ 370 սմ \times 160 սմ:

5. 4-ից 10 թվերը դասավորի՛ր շրջաններում այնպես, որ մի ուղղի վրա գտնվող յուրաքանչյուր երեք թվերի գումարը հավասար լինի 23-ի:
Պատասխանդ ցո՛ւյց տուր նկար 3-ի վրա: (4 միավոր)

Լուծում: Եթե մի ուղղի վրա գրված երեք թվերի գումարները գումարենք իրար, ապա կստանանք 4-ից 10 թվերի և մեջտեղի շրջանում գրված թվի կրկնապատիկի գումար:

1) $4 + 5 + 6 + 7 + 8 + 9 + 10 = 49$

2) $(3 \cdot 23 - 49) : 2 = 10$ (Մեջտեղի շրջանում գրված թիվն է)

3) $23 - 10 = 13$ (Մի ուղղի վրա գտնվող եզրային շրջաններում գրված թվերի գումարն է)

Այսպիսով $13 = 4 + 9 = 5 + 8 = 6 + 7$:

